

# Տյուկէ Մամուն եզր հեղինակ՝ Հակոբ Մնձուրի

Քորճայենց Նախունթը, կամ Նախունթ հարսիկը, ինչպես կկանչէին իր տարեկիցները, կամ իրմէ տարիքով փոքրերը, իրենց գետափը վարունգ ու տաղդեղ պղպեղ կտնկեր: Ընդարձակ տեղ մը չէր այգիին այդ վերջամասը: Ամենքը կալի մը չափ կար ու չկար: Գետին վախեն՝ սել մը կուգար, իրենց տնկածները կքանդէր՝ ըսելով, թափուր ձգեր էին: Բայց քանի՜ տարիէ ի վեր գետը իրենց կողմէն ալ չէր երթար: Սելը դեմի կապույտ քռաներուն դին դարձուցեր էր, անոնց տակէն՝ Գողուն ձորէն, Մասուր ձորին այգիներուն քսվելով, կհոսեր, զիրենք ազատեր էր: Անկէ ի վեր մոշիները, փշատիները մեծցեր, գոցեր էին իրենց առաջքը: Ըլլար, որ նորէն սել մը գար ու գետը նորէն իրենց կողմը դարձներ: Թող ըներ: Թող ավագով ծածկեր իրենց տնկածները: Ատոր համար չմշակէ ին, թափո՞ւր ձգէին գետինը:

Այս տարի Նախունթը ձմեռվընէ միտքը դրեր էր: Գարուն եղավ, Զատիկն որ անցավ՝ ալ չսպասեց, ներոջը՝ Միսրոնց Աղջկանը հետ բահեցին, գողձ, քար, խոտ չթողին, մաքրեցին, հարդարեցին, երեք խոշոր մաշըրա ածու եղավ: Քառակուսեցին, բաշերով բաշեցին, երկու ծրար բերեր էին՝ մեկը վարունգի, մյուսը՝ տաղդեղի հունտով: Վարունգինը քակեց, գոգնոցը լեցուց, տնկել սկսավ, շիշուրագին ծայրովը հողը փորելով, երկուական հունտ դնելով, վրան ծածկելով ու առաջանալով: Հողերն ալ անանկ մանրվեր էին, որ հինա դարձեր էին: Հեղ մը վարունգը լմնցներ, որ տաղդեղին սկսեր: Արևը կայրեր գետինները: Ճյուպպէն, սալթան հաներ էր, էնթարիով մը, գոտիով մըն էր, նորէն ալ լաչակին տակ մագերը քրտնեցան: Հողերը մայրության պատրաստվող վիճակ մը առեր էին: Տնկելը վերջացներ, ջուր մրն ալ տար, մինչև բաշերը ողողէին. մեկ մը հողերը ջուրը ծծէին՝ երեք օրէն առաջին ծիւերը վարունգներուն, տաղդեղներուն ածուններուն արգանդէն պիտի արձակվէին:

Ականջին ձայն մը եղավ: Մարդո՞ւ էր, թէ գետին ձայնն էր: Գետը չէր թողուր, որ հասկնար: Փորելը կեցուց, շիշուրագը ձեռքը՝ ականջները լարեց ու սպասեց: Գետին ձայնը կար, բայց մեկն ալ զիտես, թէ.

— Նախո հարսի՛կ, Նախո հարսի՛կ,— կկանչեր:

Գլուխը վերցուց ու շտկվեցավ: Գետին դիմացը նայեցավ: Լուսնիկանց հարսը՝ Եղիկանց Աղջիկն էր: Կապույտ քռաներուն բարձունքը կեցեր էր, իրեն կպոռար.

— Ի՞նչ է, ի՞նչ է, ի՞նչ կա,— պատասխանեց, նույնպես պոռալով, գետին ձայնը գերազանցելու ճիգով մը:

— Տյուկե Մամուն եզը մեռեր է՛, Տյուկե Մամուն եզը մեռեր է՛... Եզնոցը չոպանին տղաքը լուրը բերի՛ն, եզնոցը չոպանին տղաքը լուրը բերի՛ն...

— Ղափլան Ղայա՛ն, Ղափլան Ղայա՛ն...

— Ինըսունըիննին ձորը՛, Ինըսունըիննին ձորը՛...

— Տոստալցոնց եզնոցը խառնվեր է... Տոստալցոնց եզնոցը խառնվեր է...

— Ղոչվտեր ձորը ձգեր է՛ն... Ղոչվտեր ձորը ձգեր է՛ն...

— Ես գետեն չեմ կրնար անցնի՛լ... Ես գետեն չեմ կրնար անցնի՛լ...

— Ջուրերը շատ է՛ն... Ջուրերը շատ է՛ն...

— Հասկցա՞ր, դուն լուր մը դրկե՛... Հասկցա՞ր, դուն լուր մը դրկե՛...

— Ի՞նչ կըսես, ի՞նչ կըսես... չհասկցա՛... չհասկցա ... չհասկցա՛...— պատասխանեց իր բոլոր ուժովը պոռալով:— Ամա՛ն, սա գետիկ ձայնն ալ՝ չթողուր, որ քան մը հասկնաս, Տյուկե Մամային կըսե, ի՞նչ կըսե՝ չի հասկցվի որ:

Լուսնիկանց հարսը, որ նույնպես էնթարիով, գոտիով մրն էր, բարձունքեն նորեն սկսավ պոռալ.

— Կըսեմ քի՛... Կըսեմ քի՛...

— Տյուկե Մամուն եզը մեռե՛ր է... Տյուկե Մամուն եզը մեռեր է՛...

— Ղոչվտեր է՛ն... Ղոչվտեր է՛ն...

— Ինըսունըիննին ձորը՛, Ինըսունըիննին ձորը՛...

— Կըսե՛մ... Կըսե՛մ...— պատասխանեց:

— Ի՞նչ կա, ի՞նչ եղեր է,— հարցուց Մկրրչենց Ջարմանը,— դեմե դեմ կպոռայիք իրարու, եզի մը վրա կըսեիք.— իր եզիեն լսեր էր, բայց լավ մը չէր հասկցեր:

— Կոչենց եզը: Տյուկեին եզը մեռեր է, «գեղ գնա, լուր տուր» կըսե, մեղք են, թեք եզ մը ունեին, ան ալ ձեռքերնեն ելավ, տուն մը մարդը ադ մեկ եզով էին, ես ինտո՞ր երթամ:

— Դուն ինչո՞ւ երթաս, քուրը Անձեզկա է,— ըսավ Ջարմանը,— իրենց էզին են, առտուն աղջիկն ալ, մարն ալ հետս եկան, գնա, ըսէ, թող լուր մը դրկեն:

— Ադ աղէկ ըսիր,— հարեց Նախունթըր,— երթամ՝ ըսեմ, թող իմացնեն:

Գործը ձգեց, գետն ի վեր, էզիէ էզի, էզիէ էզի անցնելով՝ Խաշմանին էզիին հավասարությանը եկավ, ջուրին ավը կեցավ: Գետը հող նեղ ու խորունկ էր: Հանդին բոլոր էզիներուն պէս բարտիներով, փշատիներով ցանկապատված էր: Երկու ավերը իրարու դիմաց շատ մոտ էին, երեք կանգուն կայինչկային: Բայց գետը իր ահավոր ձայնովը կլեցներ միջոցը, պետք էր՝ ինչքան կրնար՝ պոռալ, որպէսզի հաղթեր գետին կատաղությանը:

— Խաշման՛ն... Խաշման՛ն...— կանչեց:

Փշատիներուն, բարտիներուն արանքեն աղջիկը եկավ, ետենն՝ մայրը:

— Ի՞նչ է... Ի՞նչ է,— պատասխանեցին երկուքը միասին:

— Կոչենց քրոջդ եզը մեռեր է... Կոչենց քրոջդ եզը մեռեր է՛...

— Ղափլան Ղայա՛ն... Ղափլան Ղայա՛ն...

— Իննըսունըիննին ձորը՛... Իննըսունըիննին ձորը՛...

— Ղոչվտե՛ր են... Ղոչվտե՛ր են...

— Քրոջդ լուր տո՛ւր... Քրոջդ լուր տո՛ւր...

— Հասկցա՛... Հասկցա՛...— պատասխանեց Խաշմանը:

Գետն ի վար, նորեն եկած էզիներեն անցնելով, իր էզին հասավ, շիշուրագովը շարունակեց վարունգին հունտերը տնկել, թէ էզին վրա ցավելով ու թէ նույն ատեն՝ գոհունակությունովը, որ իրեն տրված պարտականությունը կատարեր էր:

Խաշմանը աղջկանը՝ Հեղնոյին դառնալով.

— Ինտո՞ր ընենք,— ըսավ,— մորքքրոջդ լուր մը դրկենք:

Թառան Մաման լայնածավալ կապույտ լաչակներով գլուխը առաջքը կախեր, իշուն ետենն, իշուն ի՞նչ բեռցեր էր՝ հայտնի չէր, վերեն, հանդին կամուրջեն անցեր էր, գյուղ կերթար.

— Թառո Մամուն կանչենք, թող երթա, իմացնէ,— ըսավ Հեղնոն:

Ու առանց սպասելու, որ մայրը խոսեր, ինք իր ձայնին բոլոր ուժովը պռոսաց իրարու ետևե ու հատհատ.

— Թառո Մամա՛ ... Թառո Մամա՛ ...

Թառո Մաման էշը կեցուց ու մտիկ ըրավ:

— Գեղ երթաս նը՝ ըսե՛ ... Գեղ երթաս նը՝ ըսե՛ ...

— Տյուկե Մամուն ըսե՛ ... Տյուկե Մամուն ըսե՛ ...

— Իրենց եզը մեռեր է՛ ... Իրենց եզը մեռեր է՛ ...

— Ինըսունըիննին ձորը՛, Ինըսունըիննին ձորը՛ ...

— Ղոչվտեր ե՛ն... Ղոչվտեր ե՛ն...

— Հասկցա՞ր... Հասկցա՞ր...

— Հասկցա՛ ... հասկցա՛ ...— պատասխանեց:

«Ըմբ, ես աս իշուն ոտքովը մինչև գեղը երթամ՝ օրը կտարածամի, ե՞րբ պիտի հասնիմ, ե՞րբ պիտի ըսեմ»,— մտածեց Թառանը: Անունը Անթառամ էր, Թառան, Թառո կկանչեին:

— Չո՛ ...— պռռալով, ձեռքի մոտուլովը էշը մոտուլեց ու առաջացան: Նույն պահուն Ջերմայի հանդին էգստանեն Խառիձակի հանդը ելան Հարոնը, կինը՝ Մարոն, աղջիկը՝ Կզտանը:

«Աս աղեկ հանդիպեցավ,— մտածեց Թառանը,— ասոնց կանչեմ, թող լուր տան»: Ինք ալ Խառիձակի տափարակը ելավ: Գետին ձայնը չէր լսվեր այլևս, բայց նորեն պռռալ պետք էր, որովհետև անոնք Կապանները հասեր էին:

— Աղջի Կզտա՛ն, աղջի Մարո՛, Մչու Հարո՛ն...

Երեքն, ալ կեցան, ետև դարձան:

— Գեղ երթաք նը՝ ... Գեղ երթաք նը՝ ...

— Ըսեք Տյուկեի՛ն... ըսեք Տյուկեի՛ն...

— Իրենց եզը դոչվտեր և մեռեր է՛ .... Իրենց եզը դոչվտեր և մեռեր է՛ ...

— Ղափլան Ղայա՛ն... Ղափլան Ղայա՛ն...

— Ինքսունըիննին ձորը՝... Ինքսունըիննին ձորը...

— Հասկցա՞ք... Հասկցա՞ք...

— Կըսե՛նք, կըսե՛նք... Հասկցա՛նք, հասկցա՛նք...— պատասխանեցին:

«Թեք եզ մը ունեին, Բարիկանց Լըքին, Մանուկանց Շորին եզանը հետ կլծեին (անոնք ալ՝ մեկմեկ եզ ունեին), արտերնին կվարեին, կալերնին կկամնեին, ան ալ մեռավ... Հերկն ու կալը որո՞վ պիտի ընեն»,— ըսին իրարու Մարոն ու Հարոնը. անունը Ահարոն էր, Հարոն կկանչեին, իսկ աղջկան անունը Շուշան էր, կզակը քիչ մը տձև ըլլալուն Կզտան կըսեին: «Հիմա երթանք ըսենք, Տյուկէ Մամը դուռը նստած է, պիտի փեքոտվի, պիտի ծեծկվի, ըմը՝ ի՞նչ ընենք, պիտի ըսենք»:

Շուտ հասնելու համար՝ երեքը միասին ոտքերնին արագացուցին, Կապաններէն Աղիջրակ իջան, վերելքներուն տվին ինքզինքնին: Մամային Աղբըրնոցէն, Պարանհողքէն, Խաչքարէն, Պանտրծակէն, Սուրբ Եղու առաջքէն գյուղ մտան: Ինչպէս միշտ՝ Տյուկէ Մամը դռանը շեմը նստեր էր:

— Տյուկէ Մամ,— ըսին,— աղեկ լուր մը չենք բերեր, ամա՛ պիտի ըսենք, եզները Ղափլան Ղայան, Տոստալցոնց եզնոցը հետ դոչվտեր են, ձեր եզը դարին գլուխէն գլորեր են, Ինքսունըիննին ձորը ինկեր ու մեռեր է: Կերևա քի՛ ձորին կտումն է եղեր, ինքզինքը չէ կրցեր բռնել:

Տյուկէ Մամուն դեմքը փոխվեցավ, լայնցավ, գունատեցավ, գոչեց հեծկլտալով.

— Վա՛յ գլուխս, ալ ի՞նչ ընեմ, ո՞ւր երթամ,— լաչակները քակեց, ծեր, նոսրացած մազերը թափեց աչքերուն,— աղջի հա՛րս, աղջի Գալենց Աղջի՛կ, դուրս եկուր, նայե՛ ի՞նչ սև լուր բերին մեզի:

Հարսը, որ լսած էր, եկավ փոճկելով, արձանացավ քովը, ու՛ ինչպէս մահտունները եղերամայրը բոլորելով, ծունկի կուգան մահվոր կիները, լաչակները քակելով, աչքերուն թափելով, եղանակավոր բառերով մահվան բայաթիները կերգեն, մեռնողին հանցանքները կներեն, կենսագրությունը, բարեմասնությունները կգովեն, «վայլըմե՛, վայլըմե պավե, վայլըմե՛, պապո՛», քրդական հանկերգները կկրկնեն, լացավ ու ըսավ.— «Ալա ե՛զ, ալա ե՛զ, աս ի՞նչ է՝ ըրիր մեզի, ի՞նչ սև ձյուն բերիր մեր գլխուն, արևո՞ առիր ու գացի՛ր, ես քեզ տունես հասցուցի, հորթուկ մըն էիր, մեծցուցի, մոզի մը ըրի... Մոզի մը եղար, մեծցուցի՛ եզ մը ըրի. ուր աղվոր առվույտ մը, աղվոր խոլորձ մը, աղվոր կորճնա մը կար, փեթտեցի, քեզի բերի ու կերցուցի, գեղին եզնոցը մեջ ամենէն պոյովը եղար, կոտոշներդ լեռան եղնիկներուն կոտոշներէն ալ բարսըցան, փաշա մը դարձուցի քեզի, ալա ե՛զ, ալա ե՛զ, վայլըմե պավե՛, որո՞ւ չար աչքը դպավ քեզ. դուն ինտո՞ր թող տվիր ինքզինքդ, ես քեզ չէի թողեր, որ վարդը հոտվտայիր, ինտո՞ր հիմա սև հողին տամ ու պառկեցնեմ, ինտո՞ր լեռը դրկեցի քեզ,

լեռը գլուխդ կերավ, ես ինչո՞ւ տունը քեզ չպահեցի, մարգերուն թումբերը կտանեի, քեզ կկշտացնեի, արոտարոտ կպտտեի՝ գիշերվան խոտոյ կբերեի, մտուրդ կլեցնեի, ալա ե՞զ, ալա ե՞զ, վայլըմե՛, պապո՛, հիմա ի՞նչ պիտի ընենք մենք, տանը էրիկմարդը՝ Խորենս դրկեցինք, էրիկմարդ չունինք. մենք մնացինք դռանը ետև, հարսս ու ես, երեք մանուկներով, տուն մը մարդ քու հացդ կուտեինք, քու վարած արտերուդ, քու կամնած կալերուդ, ցորենին հացը, ալա ե՞զ, ալա ե՞զ, վայլըմե պավե՛, վա՛յ մեզի...»:

Լեռը փայտեն դարձող տղաքը, տուներուն կնիկները, շրջապատեցին դուռը:

— Ալ հերիք ծեծկվիս,— ըսին ամեն կողմեն,— լալով եզը կողջաննա նը՝ մենք ալ հետոյ նստինք ու լանք, ի՞նչ ընենք, դուն ողջ եղիր, աստված տղադ, հարսդ, թոռներդ ողջ պահե: Մենք մեր եզնիքը կլծենք, արտերդ ալ կվարենք, կալերդ ալ կկամենք:

Միքայել քեռին, որ ամենեն վերջը եկավ, իր իշուն բեռը վար չառած՝ իմացավ պատահածը.

— Ես կգրեմ Խորենին, նոր գնաց, գիտեմ, վաստակի չեղավ, թող պարտք ընե, եզի մը փարա դրկե, եզ մը կառնենք քեզի,— ըսավ:

Կոստրկացի Մովսէս Էոմերը, որ թերթի մը ուսը, ամեն օր հայերուն գյուղերն էր, կով, եզ, էջ կբերեր, կծախեր, ամեն տան մեծը, պզտիկը կճանչնար, ով ի՞նչ ուներ, ի՞նչ կարչկարը գիտեր.

— Աղլամա, Տյուկե խաթուն. աղլամա, Մեքերթմտե իքի էոքյուզ վար, սահապը սաթիյոր, սանա ալըրըզ (Մի լա, Տյուկե խաթուն, մի լա. Մեքերթմեում երկու եզ կա, տերը ծախում է, քեզ համար կառնենք),— ըսավ:

— Նե՞ ինեն ալըրըզ, Մովսէս դարտաշ (Ինչո՞վ կառնենք, Մովսէս եղբայր),— պատասխանեց Տյուկե Մամը:

— Ճանըմ, Տյուկե խաթուն, փարասընը կյուզին վերիբըզ, թեքե դաթըմընտա, Ավարա այընտա, օ վախըթա դատար տա Խորեն փարա դավուշտուրուր (Ջանըմ, Տյուկե խաթուն, դրամը աշնանը կտանք, այծերի միավորման շրջանին, Ավարայի ամսին, մինչև այդ ժամանակ էլ Խորենը դրամ կհասցնի),— ըսավ:

— Հայտի տղաք,— ըսին Դպրենց Պողոսն ու Տանձեցի մշակ Ռվակը,— թող Տյուկե Մամը լա, լալով եզը չողջննար, մենք Ղարթալ Ղայա երթանք, եզը քերթենք, միսն ու կաշին առնենք, բերենք, գիշերվան մնալու ըլլա՝ գայլերը, դարթալները եզին ոսկորները անգամ չեն ձգեր:

Ու հարսին դառնալով.

— Դուն ալ, Գալենց Աղջիկ, էշը դուրս բեր, հապիկա մը ձգե վրան, դուն ալ մեզի հետ եկուր, երթանք, ինչ կաչկա՝ բերենք:

— Ես ալ պիտի գամ,— ըսավ Օննոն՝ հարսին մեծ տղան:

— Դուն ի՞նչ պիտի ընես՝ գաս,— սաստեց մայրը,— հարսնի՞ք կերթանք, ջլջլներովդ, կեսը կա, կեսը չկա, լեռները պիտի գաս... ճիվերդ չետուկ անգամ չունիս:

— Չէ, պիտի գամ,— պնդեց Օննոն,— թող ջլջլներով ըլլամ, ջլջլներս ալ կհանեմ, ձեռքս կառնեմ, բոբիկ կքալեմ:

— Կարմիր Հողերով երթանք,— ըսին իրարու,—ամենէն կարճն է, գետէն չենք կրնար անցնիլ, Անձեղկայով պիտի երթանք:

Երկու ժամէն հասան: Չորը չիջած, չոպանին մեծ տղան, որ քրդու գույնզգույն մինթանով, վարտիքով ու շապիկով մը կայներ էր բարձունքը, չոպանի երկայն բիր մը ձեռքը ու գլուղին տղոցը պէս հայերէն կխոսեր, պռոսաց.

— Ետ դարձէ՛ք, ետ դարձէ՛ք...

— Մի՛ գա՛ք, մի՛ գա՛ք...

— Ձեր եզը ողջ է՛, ձեր եզը ողջ է՛...

— Մեռնողը Տոստալցոնց եզն էր՛...

— Անոնք եկան, տարի՛ն... Անոնք եկան, տարի՛ն...

— Աղբարներս ձեր եզը գիտցեր է՛ն... Աղբարներս ձեր եզը գիտցեր է՛ն...

— Հասկցա՞ք, հասկցա՞ք...

— Աչքդ լուս, Գալենց Աղջիկ,— ըսին Պողոսն ու Ովակը,— աչքդ լուս, ձեր եզը չէ եղեր:

Գալենց Աղջիկը չհավատաց.

— Ես պիտի երթամ, աչքովս տեսնեմ մեր եզը, որ հավատամ, հեմ՝ գեղ պիտի տանիմ, որ կեսուրս ալ տեսնե ու ալ չլա:

Բարձունքը ելան: Ինչքան եզ կար՝ ցրվեր էին, տափաստաններուն վրա կարածէին, մեծ ախորժով փրցնելով ու ուտելով խոտերը: Ջինջ միջոցին մեջ համեմներուն բույրը կար, որ խոտերէն, արոտներէն կբարձրանար:

Գալենց Աղջիկը տեսավ աչքովը իրենց եզը, որ երկու ամսվան մեջք լեռը արածելեն, իր երևակայածեն ավելի բարձրացեր էր, հոյակապ կոտոշներով եղեր էր: Տղոցը հայրը՝ Իպոն չկար, մայրերնին՝ Ղրճե Զուլալը ու երեք տղաքն էին, որոնք շրջապատեցին զիրենք: Մեծ եղբայրը նորեն հանդիմանեց մյուսները՝ սխալ լուր տանելուն, ու ըսավ.

— Ինչո՞ւ պիտի տանիք եզը, մենք ալ պիտի գանք, երեք օրեն եզնիքը պիտի բերենք, հերկը սկսելու համար:

Բայց Գալենց Աղջիկը առանց եզի չուզեց դառնալ, կեսուրը իր աչքովը տեսնելու, ուրախանալու համար: Ու եզն ու էշը պարապ հապիկայով առջևեն, իրենք՝ ետևեն, քալեցին: Երկու ձեռքերը չլլկներով Օննոն բոբիկ, վազեց մամուն լուրը տանելու:

Տյուկե Մամը, անունը Ռեհան էր, Տյուկե կկանչեին՝ ճակատը, երկու քունքերը, աչքերը սյուկեի՝ երինջի, շատ նմանելուն, ուրախության արցունքներով դիմավորեց եզը, ոտքի էլավ, ափերը բացավ, աստված փառաբանեց երեք անգամ, երեք անգամ խաչակնքեց, երեք անգամ եզին ճակատը, երկու երեսները համբուրեց.

— Արևդ սիրեմ, մեզ վախցուցիր, փաշա եզս,— ըսավ:

Երկու տղաքը, Օննոն ու անկե փոքրը՝ Եսոն, անունը Եսայի էր՝ Եսո կկանչեին, վազելով գացին աղբյուրին բլուրեն դեղին հոտոցիկ, քուշմաթ, եզան ճակտիկ, մկան ակռիկ, ինչքան անուշ խոտեր կային, փետտեցին, բերին՝ եզին մտուրը լեցուցին, որ ճամբա եկած էր, գիշերը ուտեր, երեք օր ալ, մինչև եզնիքը լեռնեն գյուղ գային, եզը պիտի տանեին, արածեին մոտակա Ավագանի ձորին, Մեղվընոցին բլուրները, որմե հետո հերկը պիտի սկսվեր: